

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԷՎՈՅՈՒՑԻԱՆՑ***

Կատերինա Ալթունյան

Բանալի բառեր՝ քաղաքական ընտրանի, կառավարող դաս, ընտրանու հավաքագրման սկզբունքներ, արիստոկրատիզմ, օլիգարխիա, կառավարող փոքրամասնություն, էլիտիզմ:

*«...Անհնար է բացահայտել քչերին, եթե նկատի չունենանք շատերին...»
Հարոլդ Լաստուել*

Քաղաքական ընտրանու (էլիտայի) հավաքագրման և կառավարման հանդեպ հետաքրքրությունը արդեն երկու հարյուրամյակից ավել շարունակում է մնալ քաղաքագիտական ուսումնասիրությունների առարկան: Գուցե դա պայմանավորված է այն իրողությամբ, որ ժողովրդավարական կառավարման սկզբունքները, մասնավորապես, ժողովրդի անմիջական կառավարման սկզբունքն այդպես էլ գործնականում որևէ երկրում չգործարկվեց: Կամ գուցե ժամանակը ցույց տվեց, որ իրական ժողովրդավարությունը հենց մեծամասնության սկզբունքով հավաքագրված փոքրամասնության կառավարումն է: Պատահական չէ, որ ընտրանիների մասին դեռ վաղ ուսումնասիրություններն ուղղված էին ոչ միայն քաղաքականության մեջ ներգրավված, գործնական որոշումներ կայացնող մարդկանց, որպես կանոն, փոքրաթիվ խմբի վերհանմանն ու կառավարման տրամաբանական և գիտական հիմնավորմանը, այլև այդ խմբի հավաքագրման և կառավարման գործընթացի ուսումնասիրությանը՝ ժողովրդավարական քաղաքական համակարգի շրջանակներում: Կառավարողների մասին փոխտոփայական առաջին դատողությունները ծագել են առաջին պետությունների ստեղծմանը զուգընթաց: Պետականակերտ հասարակություններում կառավարող ընտրանու՝ որպես քաղաքական որոշումներ ընդունող, հասարակական-քաղաքական գործընթացներն ուղղորդող լեգիտիմ քաղաքական ուժի հավաքագրումը ինքնին վերածվում է քաղաքական գործընթացի, ինչը թույլ է տալիս սահմանել մարդկանց քաղաքականության մեջ ներգրավվելու սկզբունքները՝ հաշվի առնելով մարդկանց կարգավիճակն ու սոցիալական դիրքը, պետության կազմակերպման և կառավարման գիտելիքների ու հմտությունների տիրապետումը, պետական գործերը վարելու մասնագիտական բանիմացության մակարդակը, քաղաքական ու հասարակական կառույցների հետ կապը և դրանց դերակատարությունը հասարակական-քաղաքական գործընթացներում: Գործնականում քաղաքական ընտրանիների ուսումնասիրությունն այսօր ենթադրում է հասարակական-քաղաքական կառավարման գործընթացի և կառավարող բարձր դասի կամ սոցիալական այն շերտի վերհանումը, որն անմիջականորեն իրականացնում է կառավարում [1]: Ավելորդ չի լինի, այնուամենայնիվ, նշել, որ քաղաքական ընտրանիների հավաքագրման սկզբունքների էվոլյուցիայի ուսումնասիրությունը հողվածի շրջանակներում ամենակն էլ միտված չէ ընտրանիների վերարտադրության մոդելավորմանը, այլ առաջին հերթին, ընտրանիների ձևավորման և կառավարման գործընթացի համակողմանի ուսումնասիր-

* Հոդվածն ընդունվել է 21.10.15:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

րությանը՝ ուղղված ինչպես քաղաքական ընտրանու ինքնանույնացման, վերջինիս կառավարման հիմքում դրվող սկզբունքների (մեծամասնության թե փոքրամասնության), այնպես էլ դրանց սինթեզի արդյունքում հետագայում արդյունավետ կառավարման մոդելի վերհանմանը: Մինչ այդ, հասկանալու համար, թե ով է քաղաքական ընտրանին և ինչ սկզբունքներով է հավաքագրվում և կառավարում, պետք է սկսել, ինչպես Փ. Բախրախն էր պնդում, հետևյալ հարցադրումից. «... հասկանալ, թե ովքեր և ինչ նպատակի համար են հավաքագրվում քաղաքական ընտրանի...»[2]:

Քաղաքական էլիտիզմը, ինչպես նաև էլիտիզմն [3] ընդհանրապես, սկսած Արիստոտելից մինչև Ն. Մաքհավելլի, կառավարող ընտրյալ փոքրամասնության մասին փիլիսոփայական համոզմունքների և մտածողության ինքնատիպ համակարգ է: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, փիլիսոփայական հայացքների այդ համակարգը փոխակերպվեց գիտական գործնական դպրոցի: Այդ դպրոցի տեսաբանների (Վիլֆրեդո Պարետո, Գաետանո Մոսկա, Ռոբերտ Միլսեյս) քաղաքագիտական և սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքում դուրս բերվեցին ընտրանիների մասին առաջին էմպիրիկ սահմանումները դրանով իսկ նշանավորելով ընտրանիների հավաքագրման դասական սկզբունքների ձևավորման փուլը: Այդուհետ, քաղաքագիտությունն, իբրև իշխանության, ազդեցության և ազդեցիկ մասին գիտություն [4], պետական-հասարակական կառավարման, պետության և նրա քաղաքական համակարգի գլխավոր սուբյեկտի կարգավիճակում ճանաչում է քաղաքական ընտրանուն, որպես քաղաքական իշխանությունն անմիջականորեն կրող, քաղաքականություն մշակող, կառավարչական գործառույթներ իրականացնող, քաղաքական որոշումներ ընդունող, քաղաքականությամբ մասնագիտորեն զբաղվող մարդկանց խումբ: Չիրաժարվելով դեռևս անտիկ փիլիսոփաների ընտրյալների կառավարման մասին գաղափարական ժառանգությունից, դասական էլիտիստները ընտրանիների կառավարման մասին իրենց համոզմունքների գրավչությունն ու ձգողականությունը հիմնավորեցին ժողովրդավարական կառավարման արժեքներով: Ընդ որում դրանցում պահպանվում էր կառավարման վաղ ժողովրդավարական ավանդույթը, որն էլ ենթադրում էր ընտրանու կառավարում փոքրամասնության և հավաքագրում մեծամասնության սկզբունքներով: Թեև հավաքագրման սկզբունքների էվոլյուցիային զուգընթաց ընտրանիները կերպարանափոխվել են, բայց ոչ կառավարման էլիտիստական սկզբունքը մնացել է անփոփոխ: Քաղաքական ընտրանիների կառավարման այդ տրամաբանությունը հարատև է մինչ այսօր: Դա փաստելու են գալիս մինչ այսօր գիտական շրջանառության մեջ գտնվող հետևյալ տերմինները. կառավարող դաս (Գ. Մոսկա), օլիգարխիական սկզբունքով կառավարող փոքրամասնություն (Ռ. Միլսեյս), քաղաքական ընտրանի (Վ. Պարետո), տիրապետող ընտրանի (Չ.Վ. Միլլս), տեխնոկրատիա, ռազմավարական ընտրանի (Ս. Կելլեր) և այլք: Կառավարող դասն, ըստ Գ. Մոսկայի, սոցիալական լայն շերտերից և տարբեր խավերից (զինվորականներ, ժառանգական ազնվականություն, հոգևորականներ) հավաքագրվող մարդկանց խումբն է, որն առանձնանում է հասարակական-քաղաքական կյանքը կազմակերպելու հմտությամբ [5]: Գ. Մոսկայի ուսումնասիրություններում մատնանշվում են կառավարող դասի հավաքագրման ընտրական իրավունքի, ներկայացուցչության ու գիտելիքի սկզբունքները, իսկ հավաքագրման խողովակների դերում՝ ինստիտուցիոնալ այնպիսի կառույցներ, ինչպիսիք են՝ քաղաքական կուսակցությունները (ընտրովի) և բյուրոկրատիան (նշանակովի): Եթե դիտարկենք Գ. Մոսկայի կառավարող դասի կառուցվածքը իշխանության եռաթև համակարգում, ապա կտեսնենք, որ նա, ըստ էության, կառավարող դաս ասելով, ենթադրում էր առաջին հերթին իշխանության երեք մարմինները: Ուստի քաղաքական ընտրանին, որ նույն կառավարող դասն է, քաղաքական իշխանու-

յունն անմիջականորեն կրող մարդկանց խումբն է: Կառավարող դասի հավաքագրման ինստիտուցիոնալ կառույցները և մեծամասնության սկզբունքը ապահովում են ազդեցիկ օլիգարխիայի քաղաքական տիրապետումն ու կառավարումը, քանզի ժամանակի ընթացքում ժողովրդի անմիջական կառավարման անհնարինությունը անփութափելի է դարձնում, նույնիսկ կառավարող դասի ընտրովի հատվածի վերածումը օլիգարխիայի: Ահա թե ինչու էր նա քննադատում պառլամենտարիզմը: Ինստիտուցիոնալ կառույցների և մեծամասնության սկզբունքով քաղաքական ընտրանու հավաքագրումը, որպես կապիտալիստական հասարակարգի կառավարման առանձնահատկություն, քննադատում էր նաև գերմանացի սոցիոլոգ Ռ. Միխելսը: Քաղաքական ընտրանիների կառավարման և հավաքագրման գործընթացն, ըստ Ռ. Միխելսի, անհնար է պատկերացնել առանց քաղաքական կուսակցությունների, աշխատավորական կազմակերպությունների և բյուրոկրատական կառույցների ստեղծման: Ջանգվածների, տարերային հասարակական-քաղաքական շարժումների ակտիվացման դարաշրջանում դրանք քաղաքական ընտրանու կառավարման մշտականությունն ու օրինաչափությունը երաշխավորող առանցքային կառույցներ են [6]: Ինստիտուցիոնալ և կազմակերպական բնույթի այլ կառույցների, հատկապես զանգվածային քաղաքական կուսակցությունների ստեղծմամբ, փոփոխվում է նաև քաղաքական ընտրանիների կառավարման ոճը: Վերջինս, հանգեցրեց նաև հավաքագրման հիմքում դրվող սկզբունքների որակական փոփոխման՝ որոշիչ դարձնելով հատկապես կուսակցականությունը, զանգվածներին կազմակերպելու և կառավարելու գիտելիքները՝ ինտելեկտուալ գերազանցության, ավանդույթի ու ժառանգականության, խոշոր եկամտի ու տնտեսական ներուժի կողքին [7]: Էլիտիստների համոզմամբ, դեմոկրատական հասարակություններում, քաղաքական ընտրանին կորցրեց անտիկ և միջնադարյան իմաստով արիստոկրատական ժառանգությունը: Հավաքագրման մեծամասնական սկզբունքն ու ինստիտուցիոնալ կառույցները որպես էվոլյուցիայի դասական փուլի առանձնահատկություն ազդարարեց ոչ թե լավագույնների, բանիմացների, և ոչ էլ առավել ևս ժողովրդի, այլ ազդեցիկ խմբերի կառավարման պրակտիկան: Քաղաքական ընտրանու հավաքագրման գլխավոր խողովակներից մեկը՝ քաղաքական կուսակցությունը, ժողովրդավարական հասարակություններում դադարեց լինել արիստոկրատական կառույց, երբ որպես կառույց, որից ենթադրաբար պետք է հավաքագրվեր քաղաքական բարձրագույն ընտրանին, ձևավորվեց մեծամասնության սկզբունքով: Ջանգվածային քաղաքական կուսակցությունները ավելի ակնհայտ դարձրին իշխանության անհավասարաչափ բաշխումը հասարակության մեջ՝ վերածվելով ոչ ավելին քան ժողովրդի մեծամասնության աջակցությունը ստանալու արդյունավետ մեխանիզմի. «...քաղաքական կուսակցությունը վերածվում է էլեկտորալ զանգվածի մեթոդական կազմակերպչի...» [8]: Հարկ է նշել, որ արիստոկրատիզմի և արիստոկրատական ոգու կորուստը դասական էլիտիստները համարում էին իրենց ժամանակների ընտրալների հավաքագրելու գործընթացի և անարդյունավետ կառավարման կարևոր եթե ոչ գլխավոր, խոչընդոտը: Դա հատկապես երևում է Վ. Պարետոյի հոգեբանական տեսության մեջ, ով առաջինը գիտական շրջանառության մեջ դրեց քաղաքական ընտրանի հասկացությունը: Ուսումնասիրելով նրա քաղաքական ընտրանիների հայտնի «առյուծ» և «աղվես» տիպաբանությունը [9] և առանձնացնելով այդ տիպերից յուրաքանչյուրը բնութագրող որակական հատկանիշները՝ կարծում ենք՝ քաղաքական ընտրանու մեջ Վ. Պարետոն առաջին հերթին ներառում էր հարիզմատիկ լիդերներին և բյուրոկրատներին՝ որպես հասարակական-քաղաքական կառավարում իրականացնող մարդկանց ընտրալ խմբի [9]: Այդ պնդումը հաստատելու է գալիս նաև այն փաստը, որ Վ. Պարետոն իր ժամանակների ուժեղ նախագահական կառավարման ձևի կողմնակիցներից ու գաղափա-

որական քարոզիչներից մեկն էր: Արդյունավետ կառավարման, բանիմաց քաղաքական ընտրանու հավաքագրման գլխավոր պայմաններից մեկը Վ. Պարետոն համարում էր վերջինիս՝ սոցիալական ցածր խավերի առաջ բաց լինելու հնարավորությունը, ոչ միայն կառավարման որակական կողմն ապահովելու, այլ նաև ժողովրդական զանգվածների կողմից տապալվելու հնարավորությունը նվազեցնելու տեսանկյունից:

Այսպիսով՝ քաղաքական ընտրանիների կառավարման և հավաքագրման սկզբունքների էվոլյուցիայի դասական փուլը նշանավորած երեք տեսաբանները, մոդելավորելով քաղաքական ընտրանու ժողովրդավարական մեծամասնական սկզբունքով ձևավորման, սակայն փոքրամասնության սկզբունքով կառավարման օրինաչափությունը, փաստացի թերագնահատում էին ժողովրդի կառավարման ցանկացած դրսևորում: Շնորհիվ վերջիններիս տեսական և պրակտիկ հիմնավորումների՝ այդուհետ քաղաքական ընտրանու դասական մոդելը ենթադրում է, որ բոլոր տիպի կառավարման համակարգերում կառավարում են փոքրամասնությունները: Նույնիսկ ժողովրդավարական կառավարման ձևում մեծամասնության սկզբունքով հավաքագրվելով հանդերձ՝ քաղաքական ընտրանին կառավարում է փոքրամասնության սկզբունքով՝ վերածվելով օլիգարխիայի կամ արիստոկրատիայի: Իսկ կառավարող դասի քաղաքական տիրապետության գլխավոր պայմանը մնում է իշխանությունը: Ահա թե ինչու է քաղաքական ընտրանին դասական դպրոցի շրջանակներում սահմանվում որպես քաղաքական մարմնի շրջանակներում իշխանություն ունեցող մարդկանց խումբ: Քաղաքական ընտրանին հանդես է գալիս և՛ որպես կառավարչական, իշխանական հարաբերությունների գլխավոր սուբյեկտ, և՛ որպես քաղաքական իշխանության միակ ու անմիջական կրող: Հատկանշական է, որ կառավարման արդյունավետության տեսանկյունից դասական դպրոցի տեսաբանները, ընտրանու հավաքագրման գործընթացի ինստիտուցիոնալ կողմից բացի, որոշիչ սկզբունքներ էին համարում նաև բանիմացությունը, արիստոկրատիզմը (ոչ արյունակցական, այլ որակական), հոգեբանական առանձնահատկությունները և այլն: Ինչպես ժամանակին Ն. Բերդյաևն էր գրում, քանի դեռ մարդու որակական տեսակը ոտնակոխ չի արվել քանակով, ուրեմն պահպանվելու է լավագույններին, բանիմացներին ընտրելու և առանձնացնելու մարդու փափագը [10]: Այնուամենայնիվ դասական դպրոցի շրջանակներում քաղաքական ընտրանու կառավարման մասին որոշ բացարձակ հիմնադրույթներ ուռճացրին քաղաքական ընտրանու դերը հասարակական-քաղաքական գործընթացների կառավարման համատեքստում: Այդ պատճառով քաղաքական ընտրանու հավաքագրման և կառավարման սկզբունքներից շատերը, հատկապես հոգեբանական, վերածվեցին քաղաքական ռոմանտիզմի, որն էլ պրակտիկայում ընկավ ծայրահեղությունների մեջ: Սահմանելով մարդկային և մասնագիտական այն խմբերը, դրանց հետ նաև այն սկզբունքներն ու մեխանիզմները, որոնցով հավաքագրվում էր քաղաքական ընտրանին՝ դասական դպրոցի տեսաբանները համապարփակ տեսական և էմպիրիկ նյութի հիման վրա ոչ միայն հիմնավորեցին հասարակության և պետության միջև իշխանական հարաբերությունների, մեծամասնության և փոքրամասնության միջև կառավարչական հարաբերությունների անհամաչափ բնույթը, այլև կողիֆիկացրին փոքրամասնության կառավարման օրինաչափությունը կառավարման բոլոր ձևերում, այդ թվում ժողովրդավարական:

Հասարակությունների կառավարման, այդ կառավարումն անմիջականորեն իրականացնող և ուղղորդող քաղաքական ընտրանու հավաքագրման և կառավարման գործընթացի հետդասական շրջանի առանձնահատկությունները պայմանավորվեցին ոչ միայն արժեհամակարգային, այլ նաև հասարակությունների կառուցվածքային փոփոխություններով: Այդ փոփոխությունների հանդեպ հետաքրքրությունը պայմանավորված

էր բազմաթիվ հանգամանքներով: 20-րդ դարի 40-50-ական թվականները նշանավորվեցին քաղաքական ընտրանիների տեսական և գործնական հետազոտությունների որակապես նոր մակարդակով: Չնայած երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եվրոպական մայրցամաքը՝ որպես ընտրանիների ծագման գաղափարական բնօրրան, շարունակում էր մնալ էլիտար կառավարման գաղափարը քարոզող հիմնական ուղեղային կենտրոնը, այնուամենայնիվ քաղաքական ընտրանիների կառավարման խնդիրների հետազոտությունները որակական նոր մակարդակի հասան տեղափոխվելով ամերիկյան, առավել գործնական հետազոտությունների դաշտ: Ընդլայնվեցին և հարստացվեցին նաև ընտրանիների հետազոտական մեթոդաբանությունն ու կառուցվածքային ուսումնասիրությունների պրակտիկան: Քաղաքական ընտրանիների կառուցվածքի ուսումնասիրությունների առավել հայտնի երեք՝ վարկանշային [10], դիրքային [11] և որոշումների ընդունման [12] մեթոդներով ստացված գիտափորձնական արդյունքների հիման վրա վերհանվում են քաղաքական ընտրանիների հավաքագրման և կառավարման սկզբունքների էվոլյուցիոն զարգացումների նոր շարժընթացը: Քաղաքականության և կառավարման հանդեպ մարդկանց ընկալումների որակական փոփոխությունները առաջին պլան մղեցին քաղաքականության՝ որպես գործունեության ինքնուրույն ոլորտի մասնագիտացման, քաղաքական հավասարության, աշխատանքի որակական նոր բաժանման, քաղաքական որոշումների բազմաբևեռայնության, ինստիտուցիոնալ կառույցների անարդյունավետության, կառավարող ընտրանիների արխատոկրատական ոգու վերակենդանացման և մի շարք այլ արժեքների:

Քաղաքականությունը՝ որպես ինքնատիպ մասնագիտություն, առաջինը արևմտյան աշխարհում է ճանաչվել որպես գործունեության ոլորտ, որով, ի տարբերություն այլ մասնագիտությունների, կարող ես վաստակել ոչ թե գումար, այլ անհատական հաջողություններ և հաղթանակներ [13]: Նոր արժեքային մոտեցումների համատեքստում քաղաքական ընտրանու երկու հատված էր առանձնացվում՝ ներկայացուցչական և բացառիկ: Դրանցից առաջինը, որպես կանոն, հարգանքի և եկամտի սկզբունքներով էր հավաքագրվում, իսկ երկրորդը՝ հմտությունների և անհատականության [14]: Կառավարող ընտրանիների արժեքային հռետորաբանությամբ աչքի էին ընկնում հատկապես նոր պահպանողականները:

Ընտրանիների կառավարման և հավաքագրման մասին հետդասական տեսություններում ընդգծվում է քաղաքական հավասարության, որպես ժողովրդավարական կառավարման բազային հասկացության սկզբունքը: Ընդ որում քաղաքական հավասարությունը վերաբերում է ինչպես քաղաքական պայքարի հավասարության, այնպես էլ որոշումների ընդունման գործընթացում տարբեր մակարդակների լիազորությունների և իրավասությունների տարանջատման և դրանց առանձնացման անհրաժեշտությունը [15]: Ջ. Բելլը, օրինակ, պնդում էր, որ պետք է սահմանվեն քաղաքական որոշումների ընդունման ժամանակ քաղաքական ընտրանու տարբեր մակարդակների լիազորություններն ու իրավասությունները:

Ի տարբերություն դասական դպրոցի կառավարման և հավաքագրման սկզբունքների, որոնց համաձայն, քաղաքական որոշումների ընդունման իրավասությունը պատկանում է բացառապես քաղաքական մարմնի մեջ միավորված մարդկանց՝ հետդասական տեսություններում քաղաքական մարմնի շրջանակներում իշխանություն ունենալը դեռ չի երաշխավորում կառավարչական որոշումների ընդունման գործընթացում քաղաքական ընտրանու միանձնյա մասնակցություն: Քաղաքական կամ կառավարչական որոշումների ընդունման գործընթացին մասնակցող ընտրանիների շրջանակն ընդլայնվում է ոչ կառավարական և վերազգային ինստիտուտների ներգրավման հաշվին [16]:

Ձևավորվող նոր ընտրանու կազմը առավել համընդգրկուն ներկայացնելու համար պլյուրալիստական կառավարման տեսության շրջանակներում ներմուծվում է տիրապետող ընտրանի հասկացությունը: Վերջինս արտացոլում է որակական և քանակական իմաստով սկզբունքորեն նոր ընտրանի, ըստ որի՝ տիրապետող ընտրանին հավաքագրվում է ոչ միայն իշխանական հիերարխիայում դիրքավորված, այլ նաև դրանից դուրս՝ վերազգային կազմակերպությունների և ոչ կառավարական կառույցների փոքրամասնություններից, որոնք էլ իրենց ազդեցության շնորհիվ, դե ֆակտո դառնում են քաղաքական կամ կառավարող ընտրանու մաս: Այս իրողությունը քարոզող կառավարման պլյուրալիստական-ժողովրդավարական տեսության գաղափարական առանձնահատկությունը հենց այն էր, որ հասարակության յուրաքանչյուր կազմակերպված խումբ, իր տրամադրության տակ ունենալով ազդեցիկ ռեսուրսներ, դառնում է քաղաքական որոշումների ընդունման (հաճախ նաև որոշումներ պարտադրող) գործընթացի առանցքային դերակատար: Այս դեպքում քաղաքական իշխանությանն ու քաղաքական մարմնին պատկանելությունը վերաժվում են հավաքագրման երկրորդական պայմանի: Չնայած վերը նշված գլոբալ սկզբունքներով կառավարման պրակտիկայի տարածմանը՝ գիտական որոշ շրջանակներ շարունակում են քաղաքական ընտրանին դիտել որպես պետական իշխանություն կրող և քաղաքական որոշումների ընդունման գլխավոր կենտրոն:

Այսպես՝ 2.4. Միլլսի համոզմամբ քաղաքական ընտրանին սահմանվում է որոշումների ընդունման կենտրոնով: ԱՄՆ քաղաքական ընտրանին Միլլսը համարում էր ոչ թե ազատ ընտրությունների արդյունքում ձևավորված մարդկանց խումբը, այլ նախագահի կողմից նշանակված մարդկանց խումբը (կաբինետ), որը ոչ այլ ինչ է, քան արիստոկրատիա [17]: Ճիշտ է, քաղաքական ընտրանիների հետդասական հայեցակարգերի շարժընթացը ուղեկցվել է հասարակության վերարտադրության, կազմակերպման և կառավարման գործընթացների փոփոխություններով և դրանց տառին համաձայն, այնուամենայնիվ, այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ աշխատանքի ռացիոնալ բաժանումն ու փոքրամասնության կառավարման անհրաժեշտությունը, մշտապես պահպանելու են հասարակության մեջ հիերարխիաներն ու իշխանության անհավասար բաշխման սկզբունքը՝ առանձնացնելով արտոնյալ, բանիմաց կառավարող մարդկանց խումբն ու նրանց գործառույթները: Կառուցվածքագործառնական մոտեցման համաձայն՝ հասարակության հիերարխիկ կառուցվածքի ձևավորումն անխուսափելի է՝ որպես աշխատանքի կազմակերպման ու մասնագիտացման արդյունք: Այս իմաստով երբեմն հետադիմացիորեն հասարակության քաղաքական ընտրանին նույնացնում են տեխնոկրատիայի հետ: Թեև պետք է նշել, որ քաղաքականության մեջ տեխնոկրատիայի ներկայացուցիչները հանդես են գալիս խորհրդականների և փորձագետների մակարդակով: Տեխնոկրատը քաղաքական ընտրանի չէ, բայց վերջինիս կառավարչական գործառույթների շարքում կարևորվում են քաղաքական ընտրանու շահերի պաշտպանումը: Տեխնոկրատիան գիտատեխնիկական առաջընթացի արդյունքում ձևավորված բարձրաստիճան կառավարիչների խումբն է, այլ ոչ թե քաղաքական ընտրանի: Տեխնոկրատն անպայամանորեն իշխանության մարմանցումը չէ, բայց իրականացնում է կառավարչական գործառույթներ: Իսկ որակական գլխավոր հատկանիշը, որ զանազանում է վերջինիս քաղաքական ընտրանուց, մարդկանց կառավարելու գործնական հմտություններին տիրապետելու կարողությունն է [18]: Քաղաքական ընտրանիների հավաքագրման և կառավարման սկզբունքների էվոլյուցիոն գործընթացի հետդասական փուլի առանձնահատկությունների շարքում առանձնակի ուշադրության է արժանի քաղաքական ընտրանու ինքնության սահմանման խնդիրը: Դժվար է սահմանել քաղաքական ընտրանու իրական կազմը, քանզի միայն քաղաքական ընտրանի հասկացությունը ամբողջությամբ

յամբ չի ընդգրկում և չի արտացոլում հասարակական-քաղաքական գործընթացներն ուղղորդող, քաղաքական որոշումներ ընդունող բոլոր ուժերին: Ահա թե ինչու ժամանակակից աշխարհում, հատկապես առաջադեմ ժողովրդավարական հասարակություններում, ավելի շատ կիրառվում է կառավարող, քան թե քաղաքական ընտրանի հասկացությունը: Անշուշտ, քաղաքական իշխանությունը շարունակում է մնալ կառավարող ընտրանու քաղաքական տիրապետման գլխավոր պայմաններից մեկը, սակայն որպես տեղեկատվական հասարակության արժեքավոր ռեսուրսներ, նույնքան ազդեցիկ են մնում գիտելիքը և հատկապես կառավարչական գործնական հմտությունները^[19]: Ամերիկացի սոցիոլոգ Ջ. Բերնհեմը կանխատեսում էր, որ կապիտալիստական հասարակությանը փոխարինելու էր գալու կառավարչական հմտություններ ունեցող կառավարիչների այն դասը, որոնք վերահսկում են հասարակության արտադրական միջոցները, այսինքն՝ խոշոր ձեռնարկությունների վարչարարները, բյուրոկրատները, զինվորականները և տեխնիկական աշխատանք կատարող մյուս սոցիալական խավերը, որոնց բոլորին Բերնհեմը անվանում էր մենեջերներ: Միայն չի լինի այս դեպքում այն պնդումը, որ մենեջերիզմի հայեցակարգի ակունքները ոչ միայն սերում են Գ. Մոսկայի կազմակերպական տեսությունից, այլև դրա անմիջական շարունակությունն են:

Այսպիսով՝ քաղաքական ընտրանու՝ իբրև կառավարչական հարաբերությունների սուբյեկտի գաղափարական վերելքը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին դետերմինացված էր ոչ միայն նոր հասարակական-քաղաքական գործընթացների տրամաբանության, այլև կառավարման այնպիսի մոդելի մշակման անհրաժեշտությամբ, որի շրջանակներում կապահովվեր կայուն և ժողովրդական մեծամասնության աջակցության սկզբունքով փոքրամասնության կառավարում: Եվրոպական հասարակությունը, որն արդեն հասցրել էր տեսնել զանգվածների ակտիվության վտանգը, ու զգալ հեղափոխության կործանիչ հետևանքներն ու աննախադեպ բռնությունները, առաջնային համարելով հասարակության կառավարման և կազմակերպման գործառույթները, մշակեց դեմոկրատական սկզբունքով քաղաքական ընտրանու՝ որպես կազմակերպչական հզոր ուժի, հասարակության կառավարման և ուղղորդման, քաղաքական որոշումների ընդունման գործընթացի գլխավոր սուբյեկտ լինելու քաղաքական մոդելը: Նմանատիպ մոդելներ ձևակերպվեցին Գ. Մոսկայի «կազմակերպչական», Վ. Պարետոյի «հոգեբանական», Ռ. Միխելսի «օլիգարխիայի երկայնյա օրենքի» տեսություններում: Արդյունաբերական հասարակություններում քաղաքական ընտրանու քաղաքական տիրապետման մոդելը բնութագրվում էր կազմակերպչական կուռ կառույցների միջոցով: Ժամանակակից աշխարհում քաղաքական ընտրանիների քաղաքական տիրապետության հիմքում շարունակում է պահպանվել կառավարման փոքրամասնության սկզբունքը: Գիտատեխնիկական առաջընթացի ու վերջինիս արդյունքում մեկնարկած տեղեկատվական դարաշրջանի կառավարող ընտրանին՝ կառավարման արժեհամակարգի, հասարակական կառուցվածքի, կառավարչական գիտելիքների և քաղաքականության մասնագիտացման և հավաքագրման սկզբունքների էվոլյուցիայի արդյունքում, մեր կարծիքով, առավել ակնհայտ է դարձել հետդասական ընտրանիների հավաքագրման արիստոկրատական սկզբունքները: Քաղաքական ընտրանին, գրկվելով քաղաքական որոշումների ընդունման բացարձակ իրավունքից, վաղուց դադարել է լինելուց միայն քաղաքական մարմնի մեջ մտնող մարդկանց խումբ: Կառավարողների նոր սերունդը քաղաքական ընտրանիների հավաքագրման գործընթացի էվոլյուցիայի արդյունքում մշտապես կերպարանափոխվել է, սակայն կառավարման էլիտիստական սկզբունքը մնում է անփոփոխ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Киселев И.Ю. Элитология: Учеб. Пособие, ЯрГУ, 2006, стр. 10
2. Bachrach P., The Theory of Democratic Elitism, Lanham, New York and London, 1980, p. 23
3. Holmes P., Dictionary of Politics and Government, 3rd Edition, 2004, p. 24
4. Lasswell H.P., Politics: Who Gets What, When, How, New York: Whittlesey House, 1936, p. 152
5. Mosca G., The Ruling Class (Elementi di Scienza Politia), Translated by Hannah D. Khan, New York and London, 1939, McGREW-HILL Book Company, p.154
6. Michels R., Political Parties: A Sociological Study of the Oligarchical Tendencies of Modern Democracy /Translated by Eden and Ceder Paul/, Kitchener, Batoche Books, 2001, p. 53
7. Ibid., p. 84
8. Ibid., p. 219
9. Парето В., Компендиум по общей социологии. Пер. Сит. А.А.Зотова.-М.:Изд. дом ГУ ВШЭ, 2008, стр. 45
10. F. Hunter, Community Power Structure: A study of Decision makers, The University of North Carolina Press, 1969.
11. Mills C.W., The Power Elite, Oxford University Press, 1956.
12. Dahl R., Who governs?: Democracy and Power in an American City, Second Edition (Yale Syudies in Political Science), Yale University Press, 2005
13. Шумпетер Й., Капитализм, Социализм и Демократия, www.schumpeter.ru, стр. 35
14. Lasswell H.P., Politics: Who Gets What, When, How, New York: Whittlesey House, 1936, p. 125
15. Bell J., Populism and Elitism: Politics in the Age of Equality, Published in the USA by Regnery Gateway, Washington DC, 1992, p. 29
16. Bachrach P., The Theory of Democratic Elitism, p. 67
17. Mills C.W., The Power Elite, p. 73
18. Макеев С.В., Концепции технократизма: Историко-философский анализ, Монография, М., МГОУ, 2008, стр. 23
19. Burnham J., The Managerial Revolution: What is Happening in the World, Published by Greenwood Press, 1972, pp. 78-79

ԱՄՓՈԲԱԳԻՐ

Քաղաքական ընտրանու կառավարման և հավաքագրման սկզբունքների էվոլյուցիան Կատերինա Ալթունյան

Հոդվածում քննարկվում են քաղաքական ընտրանիների մասին դասական և ժամանակակից տեսությունները: Այդ տեսությունների շրջանակներում փորձ է արվում վերհանելու քաղաքական ընտրանու կազմը, հավաքագրման և կառավարման սկզբունքները, հասկանալու, թե ովքեր են իրականում կառավարում: Այդ նպատակով քաղաքական ընտրանու հավաքագրման և կառավարման սկզբունքների մասին պատկերացումները դուրս են բերվել Գ. Մոսկայի, Վ. Պարետոյի, Ռ. Միխելսի տեսություններից: Փորձ է արվում ցույց տալու ընտրանիների կառավարման մասին գաղափարի զերակայությունը նաև հետդասական դեմոկրատական կառավարման մասին տեսություններում: Առանձնակի կարևորվում է քաղաքական ընտրանու՝ որպես հասարակա-

կան-քաղաքական գործընթացները ուղղորդող և կառավարող մարդկանց խմբի ուսումնասիրության անհարաժեշտությունը:

РЕЗЮМЕ

Эволюция принципов управления и рекрутирования политических элит

Катерина Алтунян

Ключевые слова: *политическая элита, правящий класс, принципы рекрутирования элит, аристократизм, олигархия, правящее меньшинство, элитизм.*

В статье анализируются классические и современные теории политических элит. В рамках этих теорий сделана попытка выявить не только базовый состав политической элиты, но и принципы рекрутирования и процесс их эволюции, что, в свою очередь, поможет понять управленческий процесс в реальности. Для решения этой задачи рассматриваются классические теории Г.Моски, В.Парето и Р.Михельса. Однако идея управления политических элит доминирует и в постклассических теориях. В статье особо подчеркивается роль политической элиты как группы управляющей, контролирующей и ведущей социально-политические процессы в обществе.

SUMMARY

The Evolution of Political Elites Governance and Recruitment Principles

Katerina Altunyan

Keywords: *political elite, ruling elite, recruiting principles of elite, aristocracy, oligarchy, ruling minority, elitism.*

This article discusses the classical and modern theories of political elites. In the framework of these theories we attempted to find out both definitions and recruitment principles of political elites, which is strictly important for understanding the government process. Not only the classical theories by G. Mosca, V. Pareto, R. Michels but also modern theories of elite governance were chosen to illustrate the dominant role of political elites in socio-political process.